ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/33» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 09 նոյեմբերի 2026 թ.ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Վարդանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Դավթյան, Ա. Սիերյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Ղազարյան

1. Մասնակցի ներկայացրած շտկումների գնահատում

1.1. Գնահատող հանձնաժողովը շարունակել է Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության կարիքների համար ավտոմեքենաների անվադողերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/33» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտի գնահատումը՝ ուսումնասիրելով «ՎԱՆԵՍԱ» ՍՊԸ-ի ներկայացրած շտկված փաստաթղթերը:

1.2. Արձանագրվել է, որ «ՎԱՆԵՍԱ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է 2026 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 2 արձանագրության 13.1-ին կետում արձանագրված անհամապատասխանությունների շտկման նպատակով պահանջված փաստաթղթերն ու տեղեկությունները:

1.3. Մասնակցի կողմից 1–4-րդ չափաբաժինների համար ներկայացված շտկված ամբողջական նկարագրերում լրացվել են առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները (մոդելները) և արտադրողների անվանումները: Արձանագրված անհամապատասխանությունները շտկված են, իսկ ներկայացված ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

1.4. Հաշվի առնելով ներկայացված շտկումները և թիվ 2 արձանագրությամբ արձանագրված գնահատման արդյունքները՝ «ՎԱՆԵՍԱ» ՍՊԸ-ի հայտը 1–4-րդ չափաբաժինների մասով գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ընտրված մասնակցի որոշում

2.1. Հրավերի պահանջներին համապատասխանող հայտ ներկայացնելու և հակադարձ աճուրդի արդյունքներով առաջին տեղն զբաղեցնելու հիմքով «ՎԱՆԵՍԱ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված (հաղթող) մասնակից՝ հետևյալ վերջնական գնային առաջարկներով:

Չ/հ	Գնման առարկա	Գինն առանց ԱԱՀ ՀՀ դրամ	ԱԱՀ ՀՀ դրամ	Ընդհանուր գին ՀՀ դրամ
1	Ձմեռային անվադող 255/65R17	3 762 000	752 400	4 514 400
2	Ձմեռային անվադող 245/70R16	396 000	79 200	475 200
3	Ձմեռային անվադող 265/60R18	3 400 000	680 000	4 080 000
4	Ձմեռային անվադող 255/70R16	1 089 000	217 800	1 306 800
	Ընդամենը	8 647 000	1 729 400	10 376 400

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Պայմանագիր կնքելու որոշում և անգործության ժամկետ

3.1. Ընդունել 1–4-րդ չափաբաժինների մասով «ՎԱՆԵՍԱ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշում:

3.2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

3.3. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատրաստել և տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը՝ ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ հայտարարության մեջ նշելով անգործության ժամկետը:

3.4. Անգործության ժամկետի ավարտից հետո, եթե պայմանագիր կնքելու մասին որոշումը չի բողոքարկվել, «ՎԱՆԵՍԱ» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հրավերով և օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.5. Գնումը կազմակերպված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիմքով՝ համաձայն թիվ 2 արձանագրության: Պայմանագիրը կնքել նշված հիմքին և հրավերին համապատասխան պայմաններով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Վարդանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Դավթյան

_____ Ա. Սիեբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ս. Ղազարյան